ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԳԱԳԱՐԻՆ

Այդպիսի համատարած տոն լինում է միայն Մայիսի մեկին և Նոյեմբերի յոթին: Բայց դա ավելին էր: Մայիսի և Նոյեմբերի տոնակատարությունը կրկնվում է ամեն տարի, իսկ դա միակ անգամն էր…

Մի երկու օր առաջ դեպի տիեզերք էր խոյացել Գագարինը՝ որպես սովորական մարդ, իսկ այնտեղից իջել էր՝ անմահության կնիքը ճակատին:

Մարդկային լեզվում լիարժեք որակումներ չլինելու պատճառով մենք նրան անվանում էինք տիեզերքի Կոլումբ, երկնային անսահմանությունների Մագելլան... Ապա, զգալով այդ համեմատությունների միայն մոտավոր լինելը, մենք դադարում էինք և ամեն մեկս հազարերորդ անգամ, իսկ բոլորս միասին միլիարդերորդ անգամ, կրկնում էինք նույն բառը՝ Գագարին, Գագարին, Գագարին... Նա Մագելլան չէր: Նա Կոլոմբոս չէր: Նա Գագարինն էր:

Երկու օր հետո Մոսկվան դիմավորեց նրան: Այդպես լինում է միայն մի անգամ: Ամեն տեղ նրա նկարներն էին, ամեն տեղ գրված էր՝ Գագարին: Ոմանք այդ անունը գրել էին բարձր շենքերի քիվերին ամրացրած կարմիր լաթերի վրա՝ ոմանք՝ շարասյուների առջևով տարվող պլակատների, ոմանք՝ տպագրել էին լրագրերում, գրքերի շապիկների վրա, փոքրադիր ու մեծադիր լուսանկարների տակ: Գրել էին՝ ով որտեղ կարողացել էր, ում ձեռքը որտեղ հասել էր:

Իսկ մի փոքրիկ տղա այդ անունը գրել էր կավիճով, Մոսկվայի կենտրոնական փողոցներից մեկի մայթի ասֆալտի վրա: Միայն մի բառ՝ Գագարին, բայց որքա՛ն բան էր գրել տղան դրանով... Դա սեր էր և ոգևորություն, գուցե նաև ուխտ և երդում…

Մարդիկ, շարասյուներ կազմած, փողոցի մեջտեղով քայլում էին դեպի Կարմիր հրապարակ: Բայց կային նաև մայթերով քայլող շատերը: Եվ նրանք բոլորը, հասնելով կավիճով գրված այդ անվանը, հարգանքով, շեղում էին ճանապարհը, անցնում անվան մոտով: Անպիտան փոքրիկ տղան խանգարել էր փողոցի շարժումն այդ տեղում, փոխել իր մարդկանց ընթացքը:

Ես կանգ առա և նայում էի երկար: Ոչ մի մարդ չանցավ տառերի վրայով, բոլորը շրջանցում էին գրությունը: Եվ ես հասկացա, որ դա հարգանք էր ոչ միայն հերոսի անվանը, այլև դեպի փոքրիկ տղան, դեպի նրա սերն ու ոգևորությունը, նրա ուխտն ու երդումը:

Ո՞վ գիտե, թե մի օր նա էլ չի թռչելու դեպի տիեզերքի ավելի խորքերը, ավելի բարձրերը: Դրանի՞ց ինչ, որ նա իր ճանապարհն սկսել էր ամենացածրից, ուղղակի մայթի վրայից: Առավել ևս ապշեցուցիչ էր լինելու նրա ուղին՝ Մոսկվայի ասֆալտից մինչև տիեզերքի աստղերը...

Եվ մարդիկ, քայլելով դեպի Կարմիր հրապարակ, շրջանցում էին տղայի գրած «Գագարին»-ի երկու կողմերով, ինչպես վեր խոյացած արձանի մոտով: